

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ -ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-ՕԿԿ**

ք. Երևան

«___» 07 2024 թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, և պայմանագրի 7.6 դրույթին համապատասխան /հիմք՝ կոնսորցիումի պայմանագիրը կնքված 19.06.2024թ./ (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է *ծրագրային ապահովման օժանդակ* ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:¹

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.²

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:³

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 590400000 (հինգ հարյուր իննսունչորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսերին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:⁴ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:⁵

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:⁶

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր

առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 **Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:** Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու

Ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<p style="text-align: center;">ՀՀ ՆԳՆ ք. Երևան, Նալբանդյան 130 ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 90001104471 ՀՎՀՀ 02882913 հեռ. 010596676 Էլ. հասցեն՝ police_gnumner@police.am</p> <p style="text-align: center;">_____ Ա.Ֆիդանյան /ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/ (ստորագրություն)</p> <p>Կ.Տ</p>	<p style="text-align: center;">«Էյչ Գրուպ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ. 13/30 «Արմսվիսբանկ» ՓԲԸ Հ/Հ 2500010488760100 ՀՎՀՀ 01254973 Հեռ. 091 40 40 73 Էլ. Հասցեն՝ eychgroup@gmail.com, khv_84@mail.ru</p> <p style="text-align: center;">_____ Կ. Հարությունյան /տնօրեն/ (ստորագրություն)</p>

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	7226110 0/511	<p>1. ԾԱ Սպասարկման կարգը</p> <p>1.1 Ընդհանուր դրույթներ</p> <ul style="list-style-type: none"> Բոլոր ծրագրային մոդուլների գրադարանները և ֆրեյմվորքերը պետք է թարմացվեն երկարաժամկետ սպասարկման (LTS) վերջին տարբերակով: Սերվերային օպերացիոն համակարգերի և օգտագործված գրադարանների խոցելիությունների հայտնաբերման դեպքում, պետք է անհապաղ կատարել թարմացումներ՝ այդ խոցելիությունները վերացնելու նպատակով: Յուրաքանչյուր լուծում պետք է ունենա պահուստային պատճեններ (Backup) և հստակ վերականգնման ընթացակարգ: Ծրագրային ապահովման բոլոր մոդուլները պետք է ունենան մշտադիտարկում, որը խափանումների դեպքում թույլ կտա սպասարկող անձնակազմին կարճ ժամանակում ստանալ տեղեկատվություն, բացահայտել և 	դրամ	590 400 000	1	Նալբան դյան 130	Համաձայն ազիրը ուժի մեջ մտնելու պահից 1 տարի :

		<p>վերացնել խափանումները:</p> <ul style="list-style-type: none"> • Խնդիրները բարձրաձայնելու և համակարգելու նպատակով պետք է գործի աջակցման տոմսերի էլեկտրոնային համակարգ (Ticketing System): • Բոլոր տեսակի որոշումները և փոփոխությունները կապված ծրագրային ապահովման հետ պետք է փաստաթղթավորվեն: • Պատվիրատուի պահանջով, հնարավորության դեպքում համակարգի ինտեգրում այլ համակարգերի հետ՝ API-ի առկայության դեպքում: • Կատարողը պարտավոր է իրականացնել բիզնես գործընթացների վերլուծություն և տրամադրել դրանց ավտոմատացման վերաբերյալ տեղեկատվություն: • Անհրաժեշտության դեպքում առկա համակարգում նոր ֆունկցիաների ավելացում կամ ծրագրային մոդուլների փոփոխություն և համապատասխանեցում Պատվիրատուի պահանջներին: • Սպասարկման հետ կապված բոլոր ընթացակարգերը պետք է հնարավորության դեպքում հստակեցվեն և փաստաթղթավորվեն (Service Level Agreement - SLA): • Ինտեգրված համակարգերի հետ աշխատանքի անխափանության և հուսալիության բարձրացման նպատակով պետք է ներդնել թվային տվյալների հերթերի կառավարման և տեղաբաշխման համակարգ (Message Broker կամ համարժեք), որը թույլ կտա ծրագրային ապահովման մոդուլների չնախատեսված խափանումների ժամանակ խուսափել տվյալների կորստից: • Կատարողը պարտավոր է սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնել սպասարկման ընթացքում համակարգի փոփոխությունների հետ կապված բոլոր նյութերը (ծրագրային կոդեր, փաստաթղթեր 					
--	--	---	--	--	--	--	--

		<p>և այլն):</p> <ul style="list-style-type: none"> • Ծրագրային կոդերը պետք է պահվեն Պատվիրատուի ներքին (GitLab) համակարգում, որի վրա պետք է կիրառվի կոդերի որակի ստուգման ավտոմատացված գործիքակազմ, որը կտրամադրվի Պատվիրատուի կողմից: • Տվյալների մակարդակում պետք է կատարվեն միջոցառումներ անձնական տվյալների անվտանգությունը, տվյալների շտեմարանների անվտանգ կառուցվածքի միջոցով ապահովելու համար, ՀՀ օրենսդրության համապատասխան: • Համակարգը պետք է իրականացնի տեղեկատվության ցանկացած փոփոխության, ցանկացած գործողության գրանցում ցանցում (Logging): Օգտագործողի բոլոր գործողությունները պետք է գրանցվեն գրանցամատյանում: Գրանցամատյանների միջոցով պետք է հնարավոր լինի հետևել, թե երբ և ում կողմից ինչ գործողություններ են իրականացվել համակարգում: • Պատվիրատուի հիմնավոր պահանջով խնդրի առկայության դեպքում կատարողը պարտավորվում է սպասարկումը իրականացնել պատվիրատուի աշխատավայրում մինչ խնդրի վերացումը: • Համակարգի աշխատանքի մշտադիտարկում, ծագած խնդիրների հայտնաբերում և լուծում: • Բիզնես գործնթացների վերլուծություն և խորհրդատվության տրամադրում: • Տվյալների շտեմարանի կրկնորինակում խափանումների դեպքում վերականգնելու հնարավորությամբ • Անրաժեշտության դեպքում նոր ֆունկցիոնալների ավելացում կամ առկա մոդուլների փոփոխություն և համապատասխանեցում պահանջներին: • Անհրաժեշտության դեպքում 					
--	--	--	--	--	--	--	--

արտաքին տեսքի փոփոխություն

- Անհրաժեշտության դեպքում դասընթացների կազմակերպում և խորհրդատվություն

Կատարողը պարտավոր է՝

- Սպասարկման որակը բարձր պահելու և արագ արձագանքման նպատակով սպասարկող ընկերությունը պետք է տրամադրի բազմազնային հեռախոսակապ
- Տրամադրել այն աշխատակիցների տվյալները, ովքեր իրականացնելու են սպասարկումը:
- Բոլոր աջակցման տոմսերի կատարումը իրագործել միայն պատասխանատու ստորաբաժանման հետ համաձայնեցումից հետո:
- Խափանումների դեպքում կատարողը պարտավոր է իրականացնել շտեմարանների կրկնօրինակում:
- Կատարողը պետք է առաջարկի այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք համազոր են Պատվիրատուի կողմից ներկայումս կիրառվող տեխնոլոգիաներին, գործող ենթակառուցվածքը և գործընթացները խթանելու նպատակով պետք է առավելագույնս օգտագործվի գործող SS ենթակառուցվածքը:
-

Պատվիրատուն պարտավոր է՝

- Կատարողին փոխանցել այն լիազորված անձանց տվյալները, ովքեր իրավունք ունեն պատվիրատուի անունից դիմել սպասարկող ընկերությանը:

Խափանման պատահարները դասակարգվում են երեք տեսակի՝

1. **Կրիտիկական** - որը բերում է համակարգի աշխատանքի խափանմանը, որի արդյունքում համակարգի կամ դրա հիմնական գործառնությունների հետ հետագա աշխատանքը անհնար է դառնում:

2. **Էական** - Էական Է համարվում համակարգի այն գործառնությունների խախտումը, որը չի խոչընդոտում հիմնական գործառնությունների աշխատանքը, սակայն բիզնես տրամաբանությունը ճիշտ չէ աշխատում :
3. **Աննշան** – այն խափանումները որոնք կրիտիկական կամ Էական չեն, համարվում են աննշան խափանում:
4. Սպասարկման և թարմացումների նպատակով համակարգերի անջատումները պետք է լինեն պլանային և անպայմանորեն համաձայնեցվեն պատվիրատուի համապատասխան աշխատակիցների հետ:
Համակարգերի վթարային անջատումները չեն կարող գերազանցել 4 (չորս) ժամը:

խափանման արձագանքման և վերացման ժամանակահատվածները՝

- **Կրիտիկական** խափանման դեպքում արձագանքումը պետք է տևի մինչև տասնհինգ րոպե, իսկ խափանման պատճառի մասին տեղեկատվությունը կամ դրա վերացումը մինչև մեկ ժամ:
Կրիտիկական պատահարի դեպքում կատարողը պետք է ապահովի արձագանքման և թերությունների վերացման **24/7** ռեժիմ:
- **Էական** խափանման դեպքում արձագանքումը պետք է տևի մինչև տասնհինգ րոպե, իսկ խափանման պատճառի մասին տեղեկատվությունը կամ դրա վերացումը մինչև երեք ժամ:
Էական պատահարի դեպքում կատարողը պետք է ապահովի արձագանքման և թերությունների վերացման **09:00-18:00** աշխատանքային օրերի ռեժիմով:
- **Աննշան** խափանման դեպքում արձագանքումը պետք է տևի մինչև տասնհինգ րոպե, իսկ խափանման պատճառի մասին

տեղեկատվությունը կամ դրա վերացումը մինչև մեկ օր: Աննշան պատահարի դեպքում կատարողը պետք է ապահովի արձագանքման և թերությունների վերացման **09:00-18:00** աշխատանքային օրերի ռեժիմով:

1.2 ԾԱ սխալների ուղղման և բարելավումներ կարգը

- Ծրագրային ապահովման սխալների բացահայտման կամ նոր գործառնություններ ստեղծելու անհրաժեշտության դեպքում պետք է ստեղծվի աջակցման տոմս, հնարավորինս մանրամասն տեղեկատվությամբ: Աջակցման տոմսը կարող է բացվել Պատվիրատուի կողմից կամ սպասարկողի կողմից: Աջակցման տոմսի ստեղծումը կարող է զուգորդվել հեռախոսազանգերով:
- Ըստ SLA-ի կամ ըստ պատվիրատուի պետք է որոշվի ինդրի հրատապության աստիճանը:
- Սպասարկող կողմը պետք է կատարի համակարգի աշխատանքի մշտադիտարկում և բանավոր, էլեկտրոնային նամակով կամ աջակցման տոմսի միջոցով ներկայացնի բարելավման առաջարկներ:
- Առաջարկը պետք է քննարկվի կողմերի միջև տեսազանգի կամ աշխատանքային հանդիպման միջոցով:
- Քննարկման արդյունքում Սպասարկողի կողմից պետք է ստեղծվի հանդիպման ամփոփագիր:
- Սպասարկող կողմը պետք է ներկայացնի բարելավման ֆունկցիոնալ նկարագիր և UI/UX դիզայն, եթե կա դրա անհրաժեշտությունը:
- Պատվիրատուի կողմից հավանության արժանանալու դեպքում Սպասարկող կողմը պետք է գնահատի իրականացման ժամկետները:
- Առաջնահերթություններից ելնելով

		<p>Պատվիրատուն պետք է որոշի իրականացման մեկնարկի ամսաթիվը:</p> <ul style="list-style-type: none"> Մինչև իրականացման ժամկետը լրանալը Սպասարկողը պետք է տեղեկացնի աշխատանքների ավարտի մասին կամ հայցի հավելյալ ժամանակ լուծման համար և ներկայացնի ուշացման հիմնավորումները: Խնդիրը լուծելուց հետո Պատվիրատուի հետ պետք է համաձայնեցվի թողարկման (Release) ամսաթիվը և ժամը, հաշվի առնելով անձնակազմին իրազեկելու անհրաժեշտությունը կամ համակարգի վրա հնարավոր բացասական ազդեցությունները սխալների առկայության դեպքում: Նախքան իրական համակարգի թարմացված տարբերակի թողարկումը թարմացումները պետք է թողարկվեն թեստային համակարգում և Պատվիրատուի կողմից հաստատում ստանալուց հետո այն պետք է թողարկվի ուսումնական համակարգում՝ անձնակազմի կողմից ուսումնասիրելու և յուրացնելու համար: Փոփոխությունների ամբողջական ցանկը և ժամանակացույցը պետք է փաստաթղթավորվի և անհրաժեշտության դեպքում կատարվի ուսումնական նյութերի թարմացում: <p>2. ԾԱ առկա մոդուլների սպասարկում</p> <p>2.1 Օգտատերի կառավարման համակարգի բարելավումներ</p> <p>Ելնելով ՕԿԿ գործառնությունների ընդլայնումից անհրաժեշտություն է առաջացել օգտատերերի կառավարման համակարգում ներդնել նոր գործառնություն և արդիականացնել առկա գործառնությունից որոշները:</p> <p>2.2 ԱՏՅ սպասարկում և ընդլայնում</p> <p>ՕԿԿ-ում կիրառվող ԱՏՅ ընդլայնումը եկթադրում է ՀՀ ութ մարզերի (բացի Լոռի, Շիրակ և Երևան) քարտեզների ինտեգրում, որոնք անհրաժեշտ մշակում, համապատասխանեցում և ՕԿԿ-ում</p>					
--	--	--	--	--	--	--	--

կիրառվող քարտեզի համակարգի հետ ինտեգրումից հետո կստացվի ՀՀ ամբողջական քարտեզ: Թվային քարտեզների աղբյուրը տրամադրվում է պատվիրատուի կողմից: Քարտեզի ընդլայնումը կկատարվի ըստ տարածքների և տեղեկատվության առաջնահերթության: Քարտեզի ինտեգրման և անընդհատ թարմացման համար պետք է կիրառվեն հետևյալ մեթոդները.

- Աջակցման տոմսերի միջոցով քարտեզի սխալների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկացման միջոցով:
- Տրամադրված թվային թարմացված քարտեզների համապատասխան շերտերի տրամադրման միջոցով:

2.3 Չանգերի կառավարման համակարգի արդիականացում

ՕԿԿ ստացվող ահազանգերի համակարգը օգտագործում է Asterisk ծրագրային ապահովումը, որի ինտեգրման մեխանիզմները պետք է ընդլայնվի և արդիականացվի ելնելով համակարգի նոր մոդուլներից բխող պահանջներից:

2.4 Սերվերային լուծումների արդիականացում

ՕԿԿ համակարգի ընդլայնումը առաջ է բերում անհրաժեշտություն բարելավել Սերվերային լուծումները: Անհրաժեշտություն է առաջացել արդիականացնել որոշ լուծումներ:
ՕԿԿ նոր շենքի շահագործման համար անհրաժեշտ կլինի իրականացնել սերվերների տեղաբաշխում և դրանց համապատասխան կարգաբերումներ:

3. ԾԱ նոր մոդուլների ստեղծում

3.1 ԱՊՊԱ ինտեգրում

Նյութական վնասով ճՏՊ-ների գրանցման համար պետք է ստեղծվի թվային արձանագրությունների կազմման համակարգ հաշվի առնելով ԱՊՊԱ-ի համար նախատեսված բոլոր ընթացակարգերը և կատարվի տեղեկատվության համաժամանցված փոխանակում ԱՊՊԱ Բյուրոյի տեղեկատվության թվային կառավարման համակարգի հետ:

3.2 Safe YOU ինտեգրում

Safe YOU մոբայլ հավելվածից ստացվող ահազանգերը պետք է ինտեգրվեն ՕԿԿ ահազանգերի և դեպքերի կառավարման

մոդուլի հետ՝ տեղեկատվության համաժամանցված փոխանակում կատարելով Safe YOU կառավարման համակարգի հետ:

3.3 Ոստիկանության «թեժ գծի» ինտեգրում

Ոստիկանության թեժ գծին ստացվող զանգերը պետք է ինտեգրվի ՕԿԿ զանգերի կառավարման համակարգում և որպես տեղեկատվության առանձին աղբյուր ունենա իր մշակման ընթացակարգը:

3.4 Օպերատիվ ամփոփագրերի կառավարում

ՕԿԿ դեպքերի կառավարման համակարգից ըստ ընթացակարգերի առանձնացված դեպքերը պետք է դառնան օպերատիվ ամփոփագրեր: Դրա համար պետք է ստեղծվի օպերատիվ ամփոփագրերը կառավարելու մոդուլ»

3.5 Ուսուցման կառավարման համակարգ

ՆԳՆ համապատասխան անձնակազմին ծրագրային ապահովման ուսուցման գործընթացը բարելավելու և ստանդարտացնելու նպատակով պետք է ներդրվի ներքին օգտագործման ուսուցման կառավարման համակարգ (LMS), որը թույլ կտա ստեղծել ուսումնական կուրսեր ծրագրային ապահովման վերաբերյալ բաժանված ըստ դերերի և մասնագիտությունների: Սպասարկող կողմը անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրի համապատասխան տեքստային և դիդակտիկ նյութեր ուսումնական կուրսեր ստեղծելու համար, ինչպես նաև պետք է ստեղծի ուսումնական կուրսեր համակարգի ադմինիստրավորման և սպասարկման վերաբերյալ:

ՆԳՆ-ն նշված համակարգը կարող է օգտագործել նաև ծրագրային ապահովումից բացի, այլ առարկաների մասով, կուրսանտների և անձնակազմի կրթական պրոցեսը բարելավելու համար, օգտագործելով ուսուցման կառավարման համակարգերի համաշխարհային լավագույն փորձը:

3.5 Պարեկային կարգախմբերի մոբայլ հավելված

Պարեկների ծրագրային ապահովումը բաղկացած է վեբ հավելվածից և լրացուցիչ Android հավելվածից, որը նախատեսված է համարանիշերը ճանաչող տեսախցիկների հետ աշխատելու համար:

Չնայած նրան, որ վեբ հավելվածը ունի մի շարք առավելություններ, անհրաժեշտ է այն

փոխարինել Android հավելվածով, որը թույլ կտա մեկտեղել նշված երկու հավելվածները: Android հավելվածը պետք է թույլ տա առավել էֆեկտիվ օգտագործել պլանշետի GPS-ը և տեսախցիկը, օգտատերին տա ծանուցումներ, չունենա աշխատանքի ընդհատում ժամանակավոր կապի բացակայության կամ ցածր թողունակությամբ կապի դեպքում, ինչպես նաև բարելավի պլանշետի մարտկոցով անընդհատ աշխատանքի ժամանակը:

Նոր հավելվածը պետք է լինի մոդուլային, որը թույլ կտա նոր գործիքակազմերի հետագա ավելացումները կատարել առանց դժվարությունների: Հավելվածը նաև պետք է ունենա նաև ծանուցումների գործառույթ, որը թույլ կտա ձայնային ազդանշանների միջոցով տեղեկացնել կարգախմբին կարևոր իրադարձությունների մասին:

3.6 Փրկարար ծառայության ինտեգրում

ՆԳՆ փրկարար ծառայությունը ունենալով օպերատիվ գործելու գործառույթներ պետք է ևս ինտեգրվի ՕԿԿ համակարգին: Ահազանգերի և դեպքերի կառավարման գործառույթը, ինչպես նաև դեպքի վայր մեկնող փրկարարները և տեխնիկան պետք է ևս կառավարվեն ՕԿԿ համակարգի միջոցով:

4. ՕԿԿ սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական կարողություններ

- Սպասարկող անձնակազմը պետք է ունենա նմանատիպ համակարգերի մշակման և սպասարկման փորձ:
- Սպասարկող անձնակազմը պետք է տիրապետի այն տեխնոլոգիաներին (ծրագրեր, ծրագրավորման լեզուներ, ֆրեյմվորքեր, տվյալների բազաներ և այլն) և ունենա համապատասխան աշխատանքային փորձ ու հմտություններ, որոնցով կառուցված են ՕԿԿ ծրագրային ապահովման մոդուլները:

ՕԿԿ համակարգը իր թեստավորման, ուսուցանման և իրական օգտագործման առանձնացված միջավայրերով բաղկացած է հետևյալ ենթահամակարգերից, որոնցից յուրաքանչյուրը ունի իր տեխնոլոգիական պահանջները:

4.1 Օգտատերերի կառավարում

Օգտատերերի կառավարման

համակարգը ստեղծված է C# ծրագրավորման լեզվով .NET Core ֆրեյմվորքի և ASP.NET Core վեբ ֆրեյմվորքի միջոցով: Տվյալների բազան MS SQL է: Ծրագիրը օգտագործում է տվյալների քեշավորում: Համակարգում օգտագործված են ASP.NET Core Identity և Identity Framework գրադարանները և կիրառված է OpenID Connect պրոտոկոլները: Համակարգը ապահովում է SSO: Ծրագիրը աշխատում է Docker container-ի միջոցով:

4.2 ՕԿԿ ծրագրի ֆրոնտենդ

ՕԿԿ ծրագրի ֆրոնտենդը ստեղծված է VueJS 2-ի միջոցով և օգտագործում է Vuetify ֆրեյմվորքը: Ծրագիրը օգտագործում է վեբ սոկետներ SignalR-ի միջոցով: Ծրագրում օգտագործված է NodeJS և աշխատում է Docker container-ի միջոցով:

4.3 ՕԿԿ ծրագրի բեքենդ

ՕԿԿ ծրագրի բեքենդը ստեղծված է C# ծրագրավորման լեզվով .NET Core ֆրեյմվորքի և ASP.NET Core վեբ ֆրեյմվորքի միջոցով: Ծրագիրը օգտագործում է վեբ սոկետներ SignalR-ի միջոցով: Տվյալների բազան MS SQL է: Ծրագիրը օգտագործում է տվյալների քեշավորում: Ծրագիրը ունի բազմաթիվ ինտեգրացիաներ այլ API-ների հետ: Ծրագիրը աշխատում է Docker container-ի միջոցով:

4.4 Այլ տվյալների բազաների և API-ների հետ ինտեգրում

Հաշվի առնելով այն փաստը, որ ՕԿԿ համակարգը ունի բազմաթիվ ինտեգրացիաներ Ոստիկանության, ԷԿԵՆԳ-ի, դեմքերի ճանաչման API-ի, համարանիշեր ճանաչող տեսախցիկների API-ի և այլ պետական կառույցների տվյալների բազաների և API-ների հետ, ստեղծվել է միջանկյալ API, որը ստանդարտացնում է ինտեգրումները և պարզեցնում է ծրագրային ապահովման սխեման: Ինտեգրման մեխանիզմը ներառում է

տարբեր REST API-ների հետ
ինտեգրում և տարբեր վերսիաների
Oracle տվյալների բազաների հետ
ինտեգրում: Նշված API-ն ստեղծված
է C# ծրագրավորման լեզվով .NET
Core ֆրեյմվորքի և ASP.NET Core
վեբ ֆրեյմվորքի միջոցով: Ծրագիրը
աշխատում է Docker container-ի
միջոցով:

4.5 Զեռախոսազանգերի հետ ինտեգրում

Զեռախոսազանգերը կառավարվում
են Asterisk համակարգի միջոցով,
որը վեբ հուկերի և մեսիջ բրոկերի
միջոցով ինտեգրված է O44 ծրագրի
բեքենդի հետ:

4.6 GPS սարքավորումների հետ ինտեգրում

GPS սարքավորումներից ստացվող
տվյալների կատարվում է Traccar
ծրագրի միջոցով, որը տարբեր
սարքավորումներ ինտեգրելու
համար ենթարկվել է ծրագրային
ձևափոխություն և Java
ծրագրավորման լեզվի միջոցով:
Տվյալները իրական ժամանակում
O44 ծրագրին է հասցվում վեբ
սուկետների միջոցով ինտեգրման
եղանակով: Տվյալների բազան
MySQL է: Ծրագիրը աշխատում է
Docker container-ի միջոցով:

4.7 Համարանիշեր ճանաչող տեսախցիկների Android app

Համարանիշ ճանաչող
տեսախցիկների համար ստեղծվել է
Android ծրագիր, որը աշխատում է և
տեսախցիկների API-ի հետ և
միաժամանակ O44 բեքենդի հետ:

4.8 Զարտեզների ստեղծման համակարգ

Զարտեզների ստեղծման համար
օգտագործվում է OpenStreetMap-ի
ծրագրային ապահովումը
տեղակայված Ոստիկանության
սերվերների վրա: Այն
բազմակուսակցական է և
օգտագործում է տարբեր
տեխնոլոգիաներ: Ծրագիրը և իր
կոմպոնենտները աշխատում են
Docker container-ի միջոցով:

4.9 Զարտեզային տվյալների API-ների համակարգ

Զարտեզային տվյալները բաղկացած

են հետևյալ API-ներից, որոնց համար
օգտագործվել է բաց ծրագրային
կոդով լուծումներ՝

1. Զարտեգի ռենդերինգ և
քարտեզասայիկների API
2. Հասցեների փնտրման API
3. Կարճագույն ճանապարհի
API

Նշված բոլոր ծրագրերը ունեն
որոշակի ձևափոխություններ O44-ի
խնդիրներին հարմարեցնելու համար
և աշխատում են Docker container-ի
միջոցով:

4.10 Լոգավորման և անալիտիկայի համակարգ

Համակարգի լոգավորման և
անալիտիկայի համար
օգտագործվում է Elasticsearch և
Zabbix:

4.11 Վի Արձանագրությունների մուտքագրման մոդուլ

Այս մոդուլը նախատեսված է
ոչյուրակիր համակարգիչների ինչպես
նաև օպերատորի միջոցով
իրավախախտման վերաբերյալ
տվյալների մուտքագրման,
արձանագրություն կազմելու և
որոշում կայացնելու համար: Մոդուլը
ստեղծված է PHP(Laravael)
Framework ի միջոցով տվյալների
շտեմարանը MariaDB է ֆրոնտային
հատվածում օգտագործված է HTML
CSS JS:

Համակարգը իրենից
ներկայացնում է Խախտումների
գրանցման և ղեկավարման
համակարգ որը թույլ է տալիս մշակել
ակտավորման մեթոդներ նշանակել
տուժանքի չափեր և կիրառել
տույժեր ըստ իրավախախտումների:
Ինչպես նաև կառավարել արդեն իսկ
գրանցված խախտումները ստանալ
հաշվետվություններ ժամանակային
ինտերվալներից, աշխատակիցներից
և խախտում իրականացնողներից
կախված: Համակարգը բաղկացած է
հետևյալ բաղադրիչներից՝

- 1 Համակարգի ղեկավարում: Տվյալ
բաժինը ղեկավարում է
Ադմինիստրատորը: Այս բաժնում
Ադմինիստրատորը ստեղծում է
տուգանման ենթակա կետեր
նշանակում համապատասխան

		<p>չափեր և կցում հաշվեհամար վճարումների իրականացնելու համար: Ղեկավարը կարող է մշակել ստորաբաժանումների հիերարխիկ դասավորվածությունը և նշանակել համակարգողներ ամեն ստորաբաժանման համար:</p> <p>Ադմինիստրատորը իրավունք ունի տեսնել հաշվետվություններ ինչպես ընդհանուր այնպես էլ տարբեր ստորաբաժանումների վերաբերյալ</p> <p>2:Աշխատակազմի ղեկավարում: Տվյալ մոդուլը նախատեսված է համակարգի շահառուներին համակարգում գրանցելու նրանց ստորաբաժանումների առանձնացնելու պաշտոններ նշանակելու համար: Տվյալ բաժինը ղեկավարում է ադմինիստրատորի կողմից նշանակված համակարգողը իր ստորաբաժանման մակարդակով: Համակարգողի իրավունք ունի գրանցել նաև մուտքագրող տեսակի օգտատերեր որոնք հնարավորություն կունենան մուտքագրել խախտումներ խախտման տեսակով և մանրամասներով:</p> <p>3: Խախտումների մուտքագրում: Տվյալ բաժինը իրենից ներկայացնում է խախտված նորմերի մուտքագրման համար մուտքագրման դաշտերը նախապես մշակվում է Համակարգի ադմինիստրատորի կողմից: Այս բաժնում մուտքագրում իրականացնում են տվյալ ստորաբաժանման մուտքագրողի հասանելիություն ունեցող օգտատերերը առանց խմբագրման հնարավորություն ունենալու Իսկ խմբագրման կարիք առաջանալու դեպքում այդ հասանելիությունը թույլատրում է Համակարգողը, ցանկացած փոփոխություն պահպանվում է պատմությամբ:</p> <p>4:Խախտումների կառավարում: Տվյալ բաժինը նախատեսված է մուտքագրված խախտումների իրականացման հետագա ընթացքը ապահովելու համար: Այս բաժինը ղեկավարում է համակարգողը: Համակարգողը տվյալ բաժնում կարող է վերանայել, ուղարկել</p>				
--	--	---	--	--	--	--

խմբագրման, դադարեցնել կատարումը և այլն

5: Հաշվետվություն: Այս բաժինը նախատեսված է ըստ հասանելիության հաշվետվություններ ստանալ մուտքագրված խախտումների նրանց կարգավիճակների վերաբերյալ ինչպես նաև ֆինանսական հաշվետվություն խախտումների համար գանձված դրամական կամ այլ միջոցների վերաբերյալ: Հաշվետվությունների մոդուլը մշակված է ճկուն և աշխատում է դինամիկ կապով մուտքագրվախ պարամետրերի հիման վրա:

6:Արտաքին մաս: Տվյալ բաժինը նախատեսված է տեսելու համար արդեն իսկ գրանցված խախտումները բոլոր այն մարդկանց համար որոնք տվյալ համակարգում ունեն որոշակի խախտումներ: Այս բաժնում համակարգի շահառուն տեսնում է իր խախտումները առանց մուտք գործելու մուտքագրելով անձը հաստատող փաստաթուղթ կամ ներքին իդենտիֆիկատոր և ցանկության դեպքում վճարում միանգամից:

7:Ինտեգրացիոն մոդուլներ:

- ԷԿԵՆԳ համակարգ:
- Epolice_license համակարգ:
- Epolice_vehicles համակարգ:
- ՀՀ ՆԳՆ այլ համակարգեր

4.12 Օգտատերերի ադմինիստրատիվ կառավարման մոդուլ

Այս մոդուլը նախատեսված է օգտատերերին գրանցելու հասանելիությունների մակարդակներ հատկացնելու արգելափակելու կամ արգելաբացելու համար: Մոդուլը աշխատում է Role-based access control սկզբունքով: Մոդուլը ստեղծված է PHP(Laravael) Framework ի միջոցով, տվյալների շտեմարանը MariaDB է, ֆրոնտային հատվածում օգտագործված է HTML CSS JS:

4.13 Որոշումների կառավարման
ենթահամակարգ

Ենթահամակարգը նախատեսված է կայացված որոշումների կառավարման և վերահսկման համար: Մոդուլը ստեղծված է PHP(Laravel) Framework ի միջոցով, տվյալների շտեմարանը MariaDB է, ֆրոնտային հատվածում օգտագործված է HTML CSS JS, Առանձին հատվածներում օգտագործվում է նաև NodeJS ի միջոցով գրված սկրիպտեր:

4.14 Այլ տվյալների բազաների և API-ների հետ
ինտեգրում

Մոդուլը ապահովում է փոխգործելիությունը ՀՀ Ո այլ համակարգերի հնչյաես նաև սարքավորումների հետ: Առկա են հնչյաես REST-API այնպես էլ SOAP հարցումներ տարբեր համակարգերի միջև: Մոդուլը ստեղծված է PHP(Laravel) Framework ի միջոցով, տվյալների շտեմարանը MariaDB է:

4.15 Ինքնաշխատ իրականացվող
գործառնությունների մոդուլ

Մոդուլը իրականացնում է ինքնաշխատ եղանակով իրականացվող գործառնությունները: Մոդուլը ստեղծված է PHP(Laravel) Framework ի միջոցով, տվյալների շտեմարանը MariaDB է: Առանձին հատվածներում օգտագործվում է նաև Python ի միջոցով գրված սկրիպտեր:

4.16 Համակարգի տեխնիկական սպասարկում

Համակարգի սպասարկումը պահանջում է DevOps-ի և տեխնիկական աջակցման մասնագետի հաստիքներ, որոնք պետք է ապահովեն համակարգի 24/7 աշխատանքը ՀՀ ՆԳՆ ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության աշխատակիցների հետ սերտ համագործակցելով, ինչպես նաև ոստիկանությունում պետք է ապահովվեն աշխատակիցների ներկայություն աշխատանքային ժամերին: Բացի վերը նշված

համակարգերից կան այլ օժանդակ ծրագրեր և համակարգեր, որոնց անխափան աշխատանքի կազմակերպումը ևս պետք է ապահովվի:

5. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

- Կապալառու ընկերությունը և/կամ վերջինիս անունից ծառայություններ մատուցող ենթակապալառուն հանձն են առնում գաղտնի պահել ողջ այն տեղեկատվությունը, որը հանրամատչելի չէ և չեն ստանձնի որևէ այլ հանձնարարություն, որը կհանգեցնի շահերի բախման:
- Կապալառու ընկերությունը և/կամ վերջինիս անունից ծառայություններ մատուցող ենթակապալառուն պարտավորվում են առանց պատվիրատուի գրավոր համաձայնության որևէ կողմի (բացի նախագծերի կազմակերպչական կառուցվածքում նշված անձանց) չտրամադրել աշխատանքների իրականացման շրջանակներում ստացված որևէ տեղեկատվություն՝ անկախ ստացման ձևից (գրավոր, բանավոր, էլեկտրոնային, և այլն): Սույն դրույթը կիրառվում է նույնիսկ պայմանագրի դադարեցումից հետո:
- Պայմանագրի դադարեցումից հետո կապալառու ընկերությունը և/կամ վերջինիս անունից ծառայություններ մատուցող ենթակապալառուն ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում պետք է ոչնչացնեն պայմանագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը՝ անկախ ձևից և բովանդակությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ օրենսդրությունը պահանջում է դրանց պահպանումը:

6. Ընկերության փորձառություն

- ՏՀՏ ոլորտում գործունեության առնվազն 5 տարվա փորձ
- Ելնելով համակարգի գաղտնիության և կարևորության մակարդակից ինչպես նաև հրատապ արձագանքի կարիքից սպասարկող ընկերությունը (կոնսորցիումի դեպքում

ընկերություններից առնվազն մեկը) պետք է համապատասխանի (որակավորված լինի) միևնույն միջազգային տեղեկատվական անվտանգության կառավարման (ISO 27001: 2013) և որակի ապահովման (ISO 9001:2015) ստանդարտներին:

- Առնվազն 5 տարվա փորձ էլեկտրոնային կառավարման առցանց համակարգերի մշակման, ներդրման և սպասարկման գործում:
- Նմանատիպ ծավալի և բարդության համակարգերի սպասարկման առնվազն 3 հաջողված պայմանագրի կատարում:

Սպասարկող անձնակազմի պարտադիր պահանջներ

Հաստիքի անվանում	
Սպասարկման պատասխանատու/Ծրագրի ղեկավար	
Տեխնիկական թիմի ղեկավար	
Նախագծի ղեկավար	
Ավագ ֆրոնտենդ ծրագրավորող	
Front End ծրագրավորող	
Back End ծրագրավորող	
C# լեզվի իմացությամբ	
Back End ծրագրավորող	
PHP և NodeJS լեզուների իմացությամբ	
Որակի վերահսկման/տեստավորման մասնագետ	
Տվյալների շտեմարանի մշակման/վերահսկման մասնագետ	
DEVOPS մասնագետ	

	Ս/ՍԽ դիպայներ	1			Առնվազն 10 տարվա փորձ: Բարձրագույն կրթություն
	Ս/ՍԽ դիպայներ	1			Առնվազն 3 տարվա փորձ: Բարձրագույն կրթություն

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<p>ՀՀ ՆԳՆ ք. Երևան, Նալբանդյան 130 ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 90001104471 ՀՎՀՀ 02882913 հեռ. 010596676 Էլ. հասցեն՝ police_gnumner@police.am</p> <p>_____ Ա.Ֆիդանյան /ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/ (ստորագրություն)</p> <p>Կ.Տ</p>	<p>«Էյչ Գրուպ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ. 13/30 «Արմավիսբանկ» ՓԲԸ Հ/Հ 2500010488760100 ՀՎՀՀ 01254973 Հեռ. 091 40 40 73 Էլ. Հասցեն՝ eychgroup@gmail.com, khv_84@mail.ru</p> <p>_____ Կ. Հարությունյան /տնօրեն/ (ստորագրություն)</p>

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ

« » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց _____ ստորագրություն _____ ազգանուն, անուն Կ.Տ.	Ծառայությունը ընդունեց _____ ստորագրություն _____ ազգանուն, անուն Կ.Տ.
--	---

Հավելված 3.1
« » 2024 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 _____ թ. _____^{Գնորդի անվանումը} -ին կնքված N _____^{Վաճառողի անվանումը}
_____ պայմանագրի կնքման ամսաթիվը _____^{պայմանագրի համարը}

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 _____ թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

